

ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

«ՊԱՇՏՈՆԸ ԼԱՎ ԲԱՆ Է» ՇԱՐՔԻՑ

ՄԵՂՐԸ

Անձամբ ինձ համար՝ մեղորդ եղած թե չեղած: Փոքր ժամանակ չենք ունեցել, մեր տան կերակրացանկում չի եղել, այդ է երևի պատճառը, որ նույնիսկ այս տարիքում, թոռներիցս ամաչելով, էժանագին կոնֆետ եմ ուտում, բայց չեմ նայում մեղրի կողմը: Այսինքն՝ եթե անկեղծ ասեմ, հիմա մեղր չունենք, որ կողմը նայեմ: Իսկ մի ժամանակ շատ ունեինք:

Եվ հիմնական մատակարարը իմ համագյուղացի Եփրեմն էր:

Նա մեղր ուներ, իսկ ես պաշտոն: Եվ քանի որ ես պաշտոն ունեի, նա հուսահատեցնող բարեխղճությամբ տարին մի քանի անգամ մեղր էր ուղարկում ինձ իր որդի Ցուլակի միջոցով, որը ոչ առանց իմ պաշտոնի օգնության, բժշկական ինստիտուտն էր ավարտում իմ որդի Վարդանի հետ:

Ցուլակը մեր տուն էր մտնում, սեղանին դնում բիդոնն ու ասում.

— Ձագի մեղր է, Գուրգեն դյադյա, հերս է ուղարկել:

Նորից էր մտնում, մի նոր բիդոն էր դնում սեղանին ու ասում.

— Մայիսի ծաղկի մեղրն է, Գուրգեն դյադյա, հերս է ուղարկել:

Եվ այսպես շարունակ ու անընդհատ՝ ձագի ու մայիսի ծաղկի, շրջանակով ու առանց շրջանակի: Մեղրի այդ բիդոնները հալածում էին ինձ, որտեղ գնում էի՝ ոտքիս տակ էին ընկնում, իսկ մեր պատշգամբը ոնց որ գազով լիմոնադ վաճառողի կետ լիներ, մտնել չէր լինում, ամբողջ ամառ ու աշուն մեղուներն ու բոռերը տոգում-բզգում էին, դես ու դեն թռչում կատաղած:

Կինս էլ մի կողմից էր հոգիս հանում: Մեկ էլ հանկարծ ասում էր տեղի-անտեղի.

— Մեղր բերե՞մ ուտես, Գուրգեն ջան:

Ես վրդովված տարածում էի ձեռքերս.

— Ի՞նչ, մե՞ղր, ես մեղր ե՞րբ եմ կերել, այ կին: Արջ եմ, ինչ է:

Նույն միտքը, իհարկե, անհամեմատ նրբությամբ, Ցուլակին էի հայտնում, երբ նա պատրաստվում էր գյուղ գնալ արձակուրդների օրերին:

— Ցուլակ,— ասում էի,— Եփրեմին ասա՝ էլ մեղր չուղարկի, բավական է, մանավանդ որ առանձնապես չեմ սիրում:

Բայց մի քանի օր անց օրհասի նման հայտնվում էր Ցոլակը, հերթական բիդոնը դնում սեղանին ու ասում.

— Գուրգեն դյադյա, հերս ասաց, որ անպայման ուտեք: Ասաց՝ որ մեղրը ուղեղի համար շատ օգուտ է: Ասաց՝ թե մեղրն անհրաժեշտ է պաշտոնյա մարդուն...

Իմ երեխաները, այսինքն՝ գուցե և բոլոր երեխաները մի տարօրինակ բնավորություն ունեն: Հենց որ մի կիլո խնձոր կամ դեղձ եմ բերում տուն՝ քաշքշում են իրար ձեռքից: Իսկ հենց որ արկղներով եմ բերում՝ ոչ մեկը չի մոտենում: Խնդրում, աղաչում, կլպում ենք՝ դարձյալ չեն ուտում:

Երևի ես էլ երեխաներիս եմ քաշել: Թե ինչ էր պատահել՝ չեմ հասկանում, բայց սիրտս հանկարծ մեղր ուզեց:

— Վարդուշ,— ասացի,— հանկարծ որոշեցի մեղր ուտել: Մի քիչ բեր տեսնեմ:

— Մեղր մեզ որտեղի՞ց, այ տղա,— ասաց Վարդուշը:

— Ոնց թե, մե՞ղր... բա բիդոնները... բա բոռերը...

Ու նոր միայն հետին հաշվով հիշեցի, որ վերջերս ոչ բիդոն էր ընկնում ոտքերիս տակ, ոչ էլ բոռերն ու մեղուներն էին սոզոմ-բոզոմ պատշգամբում:

— Բա Եփրեմն ինչո՞ւ չի ուղարկում,— զարմացա ու զայրացա ես:

Վարդուշը թունտ ժպտաց.

— Դե երևի իմացել է, որ քեզ պաշտոնից հանել են,— ասաց նա:

Ա՛յ քեզ բան: Ա՛յ քեզ ապերախտություն: Ա՛յ քեզ Եփրեմ: Դրա համար էր ասում, մեղրն օգտակար է ուղեղի համար... թե մեղրն անհրաժեշտ է պաշտոնյա մարդուն... Եփրեմ, Եփրեմ, պաշտոնյայի ինչի՞ն է պետք մեղրը, երբ նա ամեն ինչ ունի: Մեղրը պաշտոն չունեցողին է անհրաժեշտ, որ լարի ուղեղը, մտածի, թե ինչ ձևով նոր պաշտոն ստանա:

Ես շատ վշտացա, և ինչպես արդեն ասել եմ՝ հուսահատի կարողությամբ այնպիսի մի գործունեություն ծավալեցի, այնպիսի մարդկային, գերմարդկային ու անմարդկային միջոցների դիմեցի, որ ինձ վերականգնեցին իմ պաշտոնում:

Ուսանողների ձմեռային արձակարդների օրերն էին: Ցոլակը Վարդանիս հետ մեր տուն եկավ և ասաց, որ գյուղ է գնում՝ արձակուրդներն այնտեղ անցկացնելու համար:

— Ուրեմն գյո՞ւղ ես գնում,- հարցրեցի ես:

— Այո, Գուրգեն դյադյա,— ասաց Եփրեմի որդին:

— Դե որ գյուղ ես գնամ,— քմծիծաղ տվեցի ես,— հորդ ասա, որ մեղր ուղարկի: Ասա, որ ինձ նորից պաշտոն են տվել: Հենց այդպես էլ կասես:

— Շատ լավ, Գուրգեն դյադյա, կասեմ,— խոստացավ Յուլակը:

Շուտով կգա Յուլակը, բիդոնը սեղանին կդնի ու կասի՝ «Ձագի մեղր է, Գուրգեն դյադյա, հերս է ուղարկել»,— չարախնդությամբ մտածում էի ես:— Վայ, պաշտոն ստեղծող, ես քո հե՛րն եմ անիծել:

Յուլակը եկավ: Բայց անհավատալի մի բան, ձեռքին մեղրի բիդոն կամ թերթի մեջ փաթաթած ծանր շրջանակ չկար: Ա՛յ քեզ զարմանք...

— Յուլա՛կ,— չդիմացա ես:— Բա, ինչո՞ւ մեղր չես բերել: Հորդ չասացի՞ր, որ պաշտոն եմ ստացել:

Յուլակը կախեց գլուխը:

— Մոռացե՛լ ես,— բարկացա ես:

— Չէ,— գլուխը կախ ասաց Յուլակը... Ասացի...

— Ասացիր՝ բա հետո՞...

Յուլակը հառաչեց...

— Ասացի, Գուրգեն դյադյա, բայց հերս ասաց՝ Գուրգենին ասա, թող հրամանի քաղվածքն ուղարկի՝ կնքված ու հաստատված: Իմ աչքով տեսնեմ... Ասաց՝ հիմա միամիտ մարդ չկա: Ո՞վ է տեսել, որ պաշտոնից հանած մարդուն նորից վերականգնեն: